



ԻՆՆՕՐԵԱՅ ԱՂՕԹՔ  
ՍՐԲՈՒՀԻ ՌԻԹԱՅԻ

Արագահաս

ՍՐԲՈՒՀԻ ՌԻԹԱ

միշտ հասիր օգնութեան

.....ին  
(անուն ազգանուն)

**ԻՆՆՕՐԵԱՅ ԱՂՕԹՔ  
ՍՐԲՈՒՀԻ ՌԻԹԱՅԻ**

**ԵՐԵՒԱՆ  
2012**

## ՕՐ ԱՌԱՋԻՆ

Յանունն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
Սրբոյ: Ամէն:

*Ո՛վ վեհագոյն հրաշագործ Սրբու-  
հի Ռիթա, դէպի ինձ դարձրո՛ւ քո  
բարեգութ հայեացքը, այնքա՛ն եմ  
տառապում ու արտասուում:*

*Տեսնում ես ցաւից արիւնոտուած՝  
փշերով պատուած խեղճ սիրտս...*

*Տեսնում ես, ո՛վ Սրբուհի Ռիթա,  
որ արտասուելուց աչքերիս արցուն-  
քը ցամաքել է: Յոգնած ու յուսա-  
լքուած՝ զգում եմ, որ անգամ  
աղօթքն է չորանում շուրթերիս  
վրայ:*

*Կեանքում նման ճգնաժամերից  
արդեօք պիտի վհատուե՞մ: Դէ՛, ո՛վ*

Սրբուհի Ռիթա հասի՛ր ինձ օգ-  
նութեան: Մի՞թէ ի գուր են քեզ  
հաւատացեալները կոչել Անկարելի  
բաների Սրբուհի, փաստաբան ան-  
ելանելի իրավիճակների:

Պատուի՛ր քո այս տիտղոսը՝ Աս-  
տուծոց աղերսելով իմ խնդրած  
չնորհը ..... (ասա՛ ին խնդրանք):

Ամէնքը գովերգում են քո փառքը,  
պատմում բացառիկ հրաշքների  
մասին, որ Աստուած քո միջոցով  
է գործել: Մի՞թէ միայն ես յուսա-  
խաբուած պիտի մնամ, որովհետեւ  
ինձ չես լսում: Ո՛չ: Բարեխօսի՛ր  
ինձ համար Յիսուսին, որ գթայ  
իմ տառապանքներին ու քո միջ-  
նորդութեամբ, ո՛վ Սրբուհի, կարո-  
ղանամ ընդունել սրտիս փափաք-  
ները:

Հայր մեր որ յերկինս ես-  
տուրբ եղիցի անուն քո. եկեսցէ  
արքայութիւն քո. եղիցին կամք քո  
որպէս յերկինս եւ յերկրի:

Զհաց մեր հանապազորդ, տուր  
մեզ այսօր եւ թող զմեզ զպարտիս  
մեր, որպէս եւ մեք թողումք մերոց  
պարտապանաց, եւ մի' տանիր զմեզ  
ի փորձութիւն այլ փրկեա զմեզ ի  
չարէն. զի քո է արքայութիւն եւ  
գօրութիւն եւ փառք յաւիտեանս.  
ամէն:

*Ողջո՛յն քեզ, Մարիամ. լի  
չնորհօք. Տէր ընդ քեզ. օրհնեալ ես  
դու ի կանայս եւ օրհնեալ է պտուղ  
որովայնի քո Յիսուս:*

*Սրբուհի Մարիամ, մայր Աստու-  
ծոյ, բարեխօսեա՛ վասն մեր մեղա-  
ւորացս. այժմ եւ ի ժամու մահուան  
մերոյ. ամէն:*

*Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից. ամէն:*

## ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

Ո՛վ Քաշիայի հրաշագործ սրբուհի,  
տեսնում եմ քո կեանքի ուղին՝  
սերմանուած փորձութիւններով եւ  
սուր փշերով, որոնք ցաւօք տան-  
ջեցին քո սիրտը: Ո՛վ Ռիթա, դու  
իրօք նահատակ ես դաժան ցաւերի,  
որոնք կաթիլ կաթիլ համտեսեցիր,  
մինչեւ դատարկեցիր դրանց դառը  
բաժակը: Հաշուի առնելով քո սրը-  
տի կրած այս տանջանքները՝ քեզ  
եմ դիմում՝ աղաչելով Աստուծոց  
խնդրած շնորհս ..... (ասա՛ ին-  
դրանքը):

Դու գիտես, թէ ի՛նչ է սրտի ցաւը:  
Ծանօթ ես հոգու մարտիրոսութեա-  
նը, որովհետեւ այնքա՛ն ես կրել  
ու տանջուել: Արդ պատրաստ կը



լինես ինձ օգնութեան հասնելու:  
Ճշմարիտ էր երեւի այն, որ նման  
ցաւագին պահերին Տէրը հաճեցաւ  
գարմանահրաշօրէն երեւան հանել  
քո գեղեցիկ դէմքը, քեզ տալով  
բացառիկ հրաշքներ գործելու  
չնորհը, որպէսզի մարդիկ քեզ դի-  
մեն ու ստանան քո օգնութիւնը:

Ո՛վ սիրելի Սրբուհի նայի՛ր քո  
առաջ գլխահակ հեծեծացող իմ  
հոգուն, որ վստահում է քեզ, յոյսը  
դնելով քո հզօր բարեխօսութեան:  
Աղօթի՛ր, ո՛վ Ռիթա քո երկնաւոր  
Փեսային, որպէսզի քո հզօր պաշտ-  
պանութեան շնորհիւ իմ Աստծուց  
ստանամ խնդրածս:

Հայր մեր, Ողջո՛յն բեզ Մարիամ,  
Փառք Հօր:

## ՕՐ ԵՐՐՈՐԴ

*Ցաւից մոլորուած հայեացքս զուր  
եմ այս ու այն կողմ դարձնում՝  
առանց սփոփանք գտնելու:*

*Իմ վհատուած սրտին որեւէ եր-  
կրաւոր յոյս չի ժպտում ու ինձ ի  
սպառ կորած եմ զգում:*

*Բայց դո՛ւ, Սրբուհի Ռիթա, ով  
եկեղեցու երկնակամարում փայլում  
ես վառ աստղի գերփայլուն շողի  
նման, կրկին լուսաւորի՛ր իմ խաւար  
ճանապարհը եւ յո՛յս ներշնչիր իմ  
վշտահար սրտին: Այո՛: Վստահում  
եմ քեզ եւ քո միջնորդութեամբ  
ակնկալում եմ խնդրած շնորհս .....  
(ասա՛՛ք ինձ խնդրանք): Ընդունի՛ր այն  
Խաչեալ Յիսուսից՝ այն դաժան  
պահերի համար, որ փորձութեան*

տարան քո բարի սիրտը, երբ  
հնազանդուելով համաձայնուեցիր  
ամուսնանալ նրա հետ՝ ով քո  
գոյութիւնը մարտիրոսութեան պի-  
տի վերածէր, նրան սիրեցիր սր-  
բութեամբ ու սգացիր եղբրական  
մահը: Ընդունի՛ր ինձ համար այս  
չնորհր յանուն քո հերոսական գոհա-  
բերութեան, որ ցուցաբերեցիր՝  
նախընտրելով որ Աստուած իր  
մօտ կանչի քո որդիներին, քան  
վրիժառութեամբ առատաւորուեն:  
Ո՛հ, ի՛նչ մարտիրոսութիւն քո  
մայրական սրտի համար: Յանուն  
տառապանքներիդ ընդունի՛ր ինձ  
համար խնդրած շնորհս:

Հայր մեր, Ողջո՛յն քեզ Մարիամ,  
Փառք Հօր:

## ՕՐ ԶՈՐՐՈՐԴ

Ո՛վ անկարելի բաների Սրբուհի, անելանելի իրավիճակների փաստաբան. սրանք ցաւի փորձութեան մէջ գտնուող հոգիների համար սուրբ յոյսով լի գեղեցիկ տիտղոսներ են: Որքա՛ն պատշաճ են քեզ, ո՛վ սիրելի Սրբուհի Ռիթա, որ մեր գոյութեան ծանրագոյն պահերին, երբ մեր շուրջբոլորը յուսալքութիւն է ու մահ, գալիս ես ինչպէս երկնային պարտիզպան յուսադրելու՝ վերընձիւղումը սրտերի պապակ յոյսին: Աւա՛ղ, յոյսն իմ սրտում դաժան ցաւից նուաղել է: Աղէտի ծանրութիւնը ճնշում է ինձ, անորոշութիւնն ինձ վախեցնում է, ու չգիտեմ՝ ո՛ր կողմ շրջուել՝ ինձ

անհրաժեշտ օգնութիւնը ստանալու համար: Քեզ եմ դիմում, սրբութեան Ռիթա, հաւատով ու քո պաշտպանութեան հանդէպ լի վստահութեամբ: Աստծոյ գահի մօտ քո միջնորդութեան գօրութեամբ սպասում եմ շնորհը ..... (սաս' Բն խնդրանք) որ խնդրում եմ: Մէկ անգամ եւս ցո'յց տուր քեզ՝ կարող եւ ողորմած, ի'նձ էլ ապացուցիր, որ իրօք այնպիսին ես, ինչպէս քեզ կոչում են՝ Անկարելի բաների Սրբութի, անելանելի իրավիճակների փաստաբան:

Հայր մեր, Ողջո՛յն Բեզ Մարիամ,  
Փառք Հօր:

## ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ո՛վ սիրելի Յիսուսի հարս, Սրբուհի Ռիթա Քաչիացի, ահա կրկին քո ոտքերին առաջ եմ՝ մղուած տառապեալ հոգիների հանդէպ քո բարութեամբ:

Դու տեսնում ես կեանքի դառնութիւնից կործանուող սիրտս:

Յոյսն ինձ այլեւս չի ժպտում, ահաւոր կասկածը պատել է հոգիս, նուազել է վստահութիւնս եւ վհատութեան ահարկու վիհը բացուել է ոտքերիս տակ:

Ասա՛, ո՛վ սիրելի սրբուհի, ի՞նչ անեմ այս սարսափազդու կացութեան մէջ:

Ո՞ւմ դիմեմ կեանքիս այս ողբերգական պահին: Ո՛հ, եթէ ճշը-

մարիտ է, որ դու ես անելանելի  
իրավիճակների Սրբուհին, օգնի՛ր  
ինձ. հասի՛ր ինձ փրկութեան, այ-  
լապէս զգում եմ, որ կորած եմ:

Ես նոյնպէս դիմում եմ քեզ, որ  
միշտ ողորմած գտնուեցիր տառա-  
պեալների հանդէպ: Մի՞թէ դու  
ինձ չես գթայ:

Ո՛վ Սրբուհի Ռիթա, դու ա՛յնքան  
բարի ես: Արդ ամբողջ սրտով քեզ  
եմ յանձնւում, որպէսզի Յիսուսից  
ինձ համար ստանաս շնորհը .....  
(ասա՛՛ք Իննդրանքը) որ ջերմեռանդ  
հաւատով աղերսում եմ:

Հայր մեր, Ողջո՛յնք քեզ Մարիամ,  
Փառք Հօր:

## ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

*Ո՛վ Սրբուհի Ռիթա, երկինքն անողորմ է դարձել, իսկ աղօթնքներս չեն հասնում Աստուծոյ գահին: Յաւօք գիտեմ, որ մեղքերիս համար եմ նման պատժի արժանանում:*

*Քեզ խոստովանում եմ, որ Յիսուսին դիմելու քաջութիւնս պակասում է, որովհետեւ բազմիցս արհամարել եմ Նրա ողորմութիւնը, որի ասեղ դատաստանն եմ տեսնում ներկայ պահին: Յիսուսի աջը ծանրացել է իրօք իմ վրայ: Գիտեմ, որ արժանի չեմ ներման, եւ, ընկղմած մռայլ թախիծի մէջ, ցաւագին ողբում եմ իմ թշուառ վիճակը:*

*Ասա՛, Սրբուհի Ռիթա, արդեօք պէ՞տք է վհատուեմ: Ո՛չ: Յիսուս*



քեզ տուեց ինձ հզօր փաստաբան,  
որպէսզի քո երկնային Փեսայից  
ինձ համար ստանաս ամենաժանր  
մեղքերիս թողութիւնը եւ Նրան  
այլեւս չնեղացնելու հաստատուն  
կամքը: Այս վճռական որոշումը  
չուրթերիս եւ սրտումս՝ դիմում  
եմ քեզ, ո՛վ հրաշագործ Սրբուհի,  
որպէսզի Յիսուսից ընդունես ինձ  
համար այնքան անհրաժեշտ շնորհը  
..... (ասա՛ ին խնդրանքը):

Յողնած եմ, վշտաբեկ ու բոլորից  
լքուած: Քո մէկ խօսքը բաւարար է,  
որ Երկինքը կրկին բացուի ողոր-  
մութեան եւ թողութեան համար:

Հայր մեր, Ողջո՛յն քեզ Մարիամ,  
Փառք Հօր:

## ՕՐ ԵՕԹԵՐՈՐԴ

Ո՛վ քաղցրագոյն Սրբուհի Ռիթա, որի գոյութիւնը շարունակ դառնացաւ ցաւի մաղձով, քո բարեգութ հայեացքն ինձ դարձրու:

Իմ աղօթքը, չնայած յոգնած եւ նուաղուն, թող հասնի քո սրտին, որն անշուշտ բարութեամբ կը թեքուի իմ կողմը:

Սէրը, որ ողջ կեանքիդ ընթացքում տածեցիր մերձաւորի հանդէպ, խաղաղութեան եւ մխիթարութեան խօսքերը, սուրբ յորդորները, որ տալիս էիր բոլորին, ինձ բերում են քեզ մօտ, յատկապէս հիմա, երբ մեծ ես երկնքում, որտեղ յայտնւում ես որպէս անելանելի վիճակների Փաստաբանը:

Քո գորութեան առջեւ մահը  
նահանջում է, կոյրը գտնում է  
աչքերի լոյսը, կաղն ուղղւում է,  
անդամալոյծը բժշկւում է եւ մար-  
մնի ու հոգու բոլոր ախտերն ան-  
հետանում են:

Միթէ միայն ե՞ս պիտի չմխի-  
թարուեմ քո միջնորդութեամբ:

Ձեմ կարող հաւատալ: Ես էլ ա-  
ներկբայօրէն յոյսս դրել եմ քո  
պաշտպանութեան, քո միջամտու-  
թեան վրայ Աստծոյ մօտ, եւ վրս-  
տահ եմ, որ սիրտս կը վերագտնի  
խաղաղութիւնը եւ ինձ կը տրուի  
խնդրած շնորհս ..... (ասա՛ քո խնդ-  
րանք):

Հայր մեր, Ողջո՛յն քեզ Մարիամ,  
Փառ՛ Հօր:

## ՕՐ ՈՒԹԵՐՈՐԴ

Ո՛վ Խաչեալի սիրելի սերովբէ,  
տեսնելով քեզ Նրա աստուածային  
ոտքերին ծնրադրած, նայելով քեզ՝  
քո Փեսայ Յիսուսի փշէպսակի մի  
փշով խոցուած, քո հանդէպ իմ  
հաւատը հրաշալիօրէն մեծանում է:  
Դու իրօք Տիրոջ նախընտրելին ես:  
Նա քեզ առանձնացրեց արքայա-  
կան շնորհով, քեզ Իրենը դարձը-  
րեց: Ուստի տեսնում ես, ո՛վ Սըր-  
բուհի Ռիթա, որ չէի սխալում  
ամբողջովին քեզ վստահելով եւ քո  
գթառատ ձեռքերին յանձնուելով:

Հիմա, եթէ կամենաս, պահն է  
ինձ օգնելու: Այժմ իմ գոյութիւնը  
հայցում է քո օգնութիւնը: Քեզ,  
ում այնքան սիրում եմ, աղօթքս

ի զուր չի անցնի: Ո՛վ հօր հրա-  
շագործ, երկնային բարեգործ,  
որին ողջ աշխարհն է աղերսում,  
աղաչում եմ քեզ, յանուն Յիսուսի  
հանդէպ տածած քո սիրոյ, Նրանից  
ընդունել խնդրած շնորհս: Քեզ  
ոչինչ չեն մերժում:

Քո միջնորդութեամբ հրաշքներ,  
շնորհներ եւ բացառիկ բարիքներ  
են ստանում ամէնքը: Ես նոյնպէս  
ակնակալում եմ շնորհը ..... (աւա՛  
մբ ինդրանք), որ ամբողջ սրտով  
խնդրել եմ Տիրոջից:

Հայր մեր, Ողջո՛յն քեզ Մարիամ,  
Փառք Հօր:

## ՕՐ ԻՆՆԵՐՈՐԴ

Ահա, ո՛վ Սրբուհի Ռիթա, հասել եմ իմ իննօրեայի աղօթքի աւարտին: Կեանքիս տագնապալի վիճակում քեզ դիմելով՝ սիրտս ասես վերակենդանանում է: Վստահ եմ, որ Յիսուսից ընդունել ես քեզնից խնդրած շնորհս, այլապէս աւելի բարձր կը գոչեմ եւ քեզնից գթութիւն եւ ողորմութիւն կը հայցեմ:

Ո՛վ Սրբուհի Ռիթա, այնպէս արա՛, որ չհեռանամ առանց մխիթարուելու, արա՛ այն յանուն քո տանջանքների, յանուն քո գթասրտութեան, յանուն Յիսուսի ու Նրա Անարատ մօր հանդէպ քո սիրոյ, յանուն շնորհին, որին արժանացար

*Տիրող փշտպսակից մի փուշ ստանալով: Օգնի՛ր ինձ, հասի՛ր: Վերջին կոչս եմ քեզ անում, անկարելի բաների Սրբուհի, անելանելի իրավիճակների փաստաբան: Յո՛ւց տուր ինչի ես ընդունակ եւ ստացիր ..... (ասա՛՛ք եւ խնդրանք) շնորհ:*

*Որոշել եմ քո օգնութեամբ փոխել իմ վատ կեանքը եւ լինել աստուածային զօրութեան եւ բարութեան առաքեալ, գնալ Քաշիայի քո ուխտավայրն ու քո մեծարմանը մասնակցել, ի նշան երախտագիտութեան մեր Փրկիչ Յիսուսից քո միջոցով ստացած երկնային շնորհների:*

*Հայր մեր, Ողջո՛յնք եւզ Մարիամ,  
Փառք՝ Հօր:*



ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ  
Արագահաս Սրբուհի Ռիթա



Գոհութեան եռօրեայ աղօթք առ  
Աստուած՝ ի պատիւ  
սրբուհի Ռիթայի

## ԱՌԱՋԻՆ ՕՐ

*Անսահման ողորմութեան յաւիտե-  
նական Հայր, որի բարութեան  
գանձերն անսահման են. ահա ծնրա-  
դրած Քո Վսեմութեան առջեւ՝ սր-  
տիս խորքից երախտագիտութեան  
օրհներգ եմ բարձրացնում Քաշիայի  
Սրբուհի Ռիթայի արժանիքներով  
ինձ պարգեւած շնորհիդ համար:*

*Ընդունում եմ, Աստուած՝ իմ,  
որ, անարժան եմ. սակայն, ինչպէս*

միշտ, Դու վեհանձնօրէն անտեսեցիր թշուառութիւնս, եւ լսեցիր աղօթքները, որ իմ անունից Քաշիայի սիրելի Սրբուհին նուիրեց Քեզ:

Ո՛վ Սրբուհի Ռիթա, եկեղեցու վեհագոյն հրաշագործ, այնքա՛ն խորն է երախտագիտութիւնս նաեւ քո հանդէպ:

Սիրտս խայտում է այսքան բարութիւնից: Շուրթերս պատշաճ խօսքեր չեն գտնում սրտիցս բխած զգացմունքներն արտայայտելու: Ո՛վ սիրելի Սրբուհի, ինչքան իրաւացի են նրանք, ովքեր ապաւինում են քո պաշտպանութեանն ու յուսախաբ չեն մնում:

Միշտ եղի՛ր ինձ բարեխօս, որպէսզի արժանի լինեմ Աստծոյ

*ողորմութեանը եւ քո պաշտպանութեանը կեանքի եւ մահուան ժամերին:*

Հայր մեր, Ողջո՛յն քեզ Մարիամ,  
Փառք Հօր:

### ԱՂՕԹՔ

*Ո՛վ փառաւոր Սրբուհի Ռիթա, որ հրաշաբար մասնակցեցիր մեր Տէր Յիսուս Քրիստոսի սաստիկ չարաւնքներին, ընդունի՛ր Նրանից, որ ես էլ անտրտունջ կրեմ այս կեանքի ցաւերը եւ պաշտպանի՛ր ինձ բոլոր դժուար պահերին:*

## ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

*Ո՛վ ամենասիրելի Սիրտ Յիսուսի,  
որ մարգարէի միջոցով յայտնեցիր  
չցանկանալ մեղաւորի մահը, այլ  
նրա դարձն ու կեանքը, արդ Քո  
առջեւ եմ ես՝ թշուառս, ամբողջ  
սրտով շնորհակալութիւն յայտնելու  
ինձ պարգեւած բացառիկ շնորհի  
համար, Քո աղախնին՝ Քաշիայի  
Սրբուհի Ռիթայի արժանիքներով:  
Իսկ ինչո՞վ կարող եմ փոխհատուցել,  
ո՛վ Տէր, այն ամէնի համար, որ  
այնքան սիրով տուեցիր ինձ:*

*Ո՛վ իմ Աստուած, թող երբեք  
չնուազի երախտագիտութիւնս քո  
նկատմամբ, Դու, ով բարի ես Քեզ  
վշտացնողների հանդէպ:*

Սրբուհի Ռիթա, իսկ ինչո՞վ  
կարող եմ հատուցել քո միջոցով  
ստացած խնդրանքիս համար:

Սիրտս ցնծում է եւ քո հանդէպ  
անվերջ երախտապարտ կը լինեմ:  
Ո՛վ բարի Սրբուհի, որ այնքան  
մօտ ես մեր Տիրոջ, փոխանցիր իմ  
չնորհակալութիւնը անոյշ Յիսու-  
սին՝ ընդունելով, որ սրտումս մնայ  
երախտագիտութիւնը Նրա եւ քո  
հանդէպ, ինչպէս նաեւ, յաւերժական  
նողկանք մեղքից, որպէսզի արժա-  
նանամ Նրա ողորմութեանն ու  
երկնային պաշտպանութեանը:

Հայր մեր, Ողջո՛յն քեզ Մարիամ,  
Փառք Հօր:

Աղօթք. Ո՛վ փառաւոր...

## ՕՐ ԵՐՐՈՐԴ

Ո՛վ իմ անոյշ ու սիրելի Տէր,  
որ չես թողնում նրանց, ովքեր յոյս  
ու հաւատ ունեն Քո հանդէպ, եւ  
վշտի մէջ տառապել են, այլ սիրով  
լսում ես նրանց աղօթքները. սրբ-  
տիս խորքից յայտնում եմ իմ  
անսահման երախտագիտութիւնը՝  
Քեզնից խնդրած շնորհս պարգե-  
ւելու Քո ընտրեալ աղախնի՝ Սր-  
բուհի Ռիթայի արժանիքներով:

Ընդունի՛ր, ով իմ սիրելի Յիսուս,  
որպէս զոհարերութեան բուրմունք,  
Սրբուհի Ռիթայի ձեռքերից իմ  
ողջ երախտագիտութիւնը, իմ յա-  
ւերժական շնորհակալութիւնը:

Սիրելի Յիսուս, օգնի՛ր, որ միշտ արժանի լինեմ Քո բարութեան եւ ողորմութեան կոչերին:

Իսկ դու, ո՛վ փառաւոր հրաշագործ Սրբուհի, որի անունը ողջ աշխարհում մեծ ուրախութեամբ է փառաբանւում, որ իր պաշտպանութեան ներքոյ հեղեղում է հրաշքներ եւ շնորհներ, ընդունի՛ր իմ խորին շնորհակալութիւնը:

Ո՛հ, որքան կ'ուզենայի, որ ամէնքը ճանաչէին քեզ, որովհետեւ անշուշտ ամէնքը կը սիրէին ու կը վայելէին քո երկնային զօրութիւնը:

Ո՛վ Քաշիայի պայծառ աստղ, ի պատասխան քո արժանիքների միջոցով իմ ստացած շնորհների՝ ամէնուր պիտի տարածեմ քո բարեպաշտութիւնը՝ աւետելով, որ դու

*իրօք անկարելի բաների Սրբուհին  
ես, անելանելի իրավիճակների  
Փաստաբանը, յատկապէս նրանց  
համար, որոնց չի ժպտում ոչ մի  
երկրային յոյս: Ամէն:*

Հայր մեր, Ողջո՛յն քեզ Մարիամ,  
Փառք Հօր:

Աղօթք. Ո՛վ փառաւոր...



## ԱՂՕԹՔ

ընտանեկան կարիքների համար

*Տէ՛ր, որ ստեղծեցիր ողջ տիեզերքը եւ երկիրն ապահովեցիր բոլոր բնակիչների կարիքները բաւարարող հարստութիւններով, հասի՛ր մեզ օգնութեան:*

*Տէր, որ մտածում ես դաշտի շուշանների եւ երկնքի թռչունների մասին, նրանց զգեստաւորում ես, կերակրում եւ բազմացնում, մեզ նոյնպէս ցոյց տուր քո հայրական Նախախնամութիւնը:*

Օգնի՛ր, Տէր. եւ քանի որ մեր  
փրկութիւնը գալիս է միայն ազ-  
նիւ ու բարի մարդկանցից, մեր  
մերձաւորների սրտերը լցրո՛ւ ար-  
դարութեամբ, ազնուութեամբ եւ  
գթասրտութեամբ:

Պահի՛ր մեր ընտանիքը, որ վստա-  
հութեամբ քեզնից է սպասում հա-  
նապագօրեայ հացը: Ուժեղացրո՛ւ  
մեր մարմինը: Խաղաղեցրո՛ւ մեր  
կեանքը, որպէսզի աւելի հեշտօ-  
րէն արժանի լինենք քո երկնա-  
յին շնորհներին, ու զգանք, որ  
քո հայրական սէրը հովանի է մեր  
մտահոգութիւններին ու նեղու-  
թիւններին:

Քեզ այն խնդրում եմ Սրբուհի  
Ռիթայի միջնորդութեամբ:

## ՄՕՐ ԱՂՕԹՔԸ

Ո՛վ Անարատ Կոյս, որ մայրն ես  
Յիսուսի ու նաեւ իմ մայրը, դէպի  
ինձ դարձրո՛ւ քո ողորմութեան ու  
սիրոյ հայեացքը, ով այսօր առաւել  
քան երբեք զգում է մայրութեան  
անոյշ եւ ծանր պատասխանատը-  
ւութիւնը: Քեզ եմ վստահում զա-  
ւակներիս, որոնց այնքան սիրում  
եմ, որոնց համար այնքան տան-  
ջուել եմ եւ որոնց համար մի օր  
հաշուետու եմ լինելու քո Երկնա-  
ւոր Որդու առաջ:

Սովորեցրո՛ւ ինձ նրանց առաջ-  
նորդել այնպէս, ինչպէս Սրբուհի  
Ռիթան առաջնորդեց իր որդիներ-

րին՝ ապահով ձեռքով այն ճանապարհով, որ տանում է դէպի Տէրը:

Դարձրո՛ւ ինձ քնքուշ՝ առանց թուլութիւնների եւ ուժեղ՝ առանց կոպտութիւնների: Ընդունի՛ր ինձ համար այդ անսպառ համբերութիւնը, որ ամէն ինչի դիմանում է, որովհետեւ ունիմ միայն մէկ նպատակ՝ զաւակներիս յաւիտենական փրկութիւնը:

Օգնի՛ր ինձ այս դժուարին գործի մէջ, ո՛վ Սուրբ Կոյս:

Սիրտս դարձրո՛ւ քո սրտի նման եւ տո՛ւր, որ զաւակներս իմ մէջ տեսնեն քո առաքինութիւնների արտացոլումը, որպէսզի ինձնից սովորելով այս աշխարհում քեզ սիրելը, միանան ինձ հետ երկնքում՝ քեզ օրհնելու եւ գովերգելու հա-

մար: Այս նպատակի համար, սրբ-  
բերի Թագուհի, շնորհի՛ր նրանց  
Քաշիայի Սրբուհի Ռիթայի պաշտ-  
պանութիւնը: Ամէն:

### ԱՇԽԱՏԱԻՈՐԻ ԱՂՕԹՔԸ

Տէր Յիսուս, քեզ եմ նուիրում  
իմ օրը, իմ աշխատանքը, իմ պայ-  
քարները, ուրախութիւններն ու  
ցաւերը:

Պարգեւի՛ր ինձ ու իմ աշխատաւոր  
եղբայրներին Քեզ նման մտածելու,  
Քեզ հետ աշխատելու եւ Քո մէջ  
ապրելու շնորհը:

Տո՛ւր, որ Քեզ սիրեմ ամբողջ սրբ-  
տով ու ծառայեմ ամբողջ ուժով:

Թող գայ Քո Թագաւորութիւնը

աշխատանքի սեղաններին, արհեստանոցներում, գրասենեակներում եւ տներում:

Թող բոլոր աշխատաւորների հոգիները, որ այսօր վտանգի մէջ են, պահպանուեն Քո շնորհի մէջ:

Իսկ աշխատանքի վայրում ընկած աշխատաւորները թող քո ողորմութեամբ հանգչեն խաղաղութեան մէջ:

Իմ ու բոլորիս ջանքերը պահի՛ր Սրբունի Ռիթայի բարի պաշտպանութեան ներքոյ:

## ՈՒՍԱՆՈՂԻ ԱՂՕԹՔԸ

Ո՛վ անպատում յաւիտենական Աստուած, որ ամենայն հեզութեամբ դասաւորեցիր արարչութեան բոլոր հրաշալիքներն ու ներդաշնակութիւնները, լոյսի եւ իմաստութեան աղբիւր, Դու լուսաւորեցիր մեր մտքերը հաւատի պայծառութեամբ:

Արժանացրո՛ւ իմ բանականութեան խաւարին՝ Քո իմաստութեան շողը, որ փարատի իմ տգիտութիւնն ու մեղքը:

Դու, որ ճարտար ես դարձնում մանուկների լեզուն, վարժեցրո՛ւ իմ լեզուն եւ ներշնչի՛ր Քո օրհնութեան շնորհն իմ շուրթերին: Տո՛ւր

ինձ սուր միտք, մտապահելու կարողութիւն, սովորելու միջոց եւ դիւրութիւն, մեկնաբանելու հրմտութիւն: Դո՛ւ եղիր միջնորդ, ո՛վ Անարատ Կոյս Մարիամ, Աթոռ աստուածային իմաստութեան:

Դու նաեւ բարեխօսիր, ո՛վ Սրբուհի Ռիթա, եւ տո՛ւր, որ առաջնորդուած հաւատի լոյսով, իմ քայլերն ուղղեմ՝ ձեռք բերելու գերագոյն իմաստութիւնը՝ Աստծոյ երկիւղը, եւ հասնելու քրիստոնէական կատարելութեան:



## ԱՂՕԹՔ ԱՌ ՍՐԲՈՒՀԻ ՌԻԹԱ

*Ցաւերի ծանրութեան տակ՝ քեզ  
եմ դիմում, ո՛վ Սրբուհի Ռիթա,  
վստահ, որ ինձ կը լսես: Խնդրում  
եմ՝ ազատի՛ր իմ խեղճ սիրտն ամէն  
կողմից ճնշող նեղութիւններից եւ  
վերադարձրո՛ւ տագնապախուով հո-  
գուս հանդարտութիւնը:*


*Դու, որ Աստծուց ընտրուել ես  
որպէս Անելանելի իրավիճակների  
Փաստաբան, ընդունի՛ր ինձ համար  
չնորհր, որ սրտանց խնդրում եմ  
..... (ասա՛ քո խնդրանքը):*

*Եթէ մեղքերս խոչընդոտում են  
իմ խնդրանքների իրականացման*

համար, ընդունի՛ր Աստծուց դրանց  
զղջումը եւ քաւութիւնը:

Մի՛ թող, որ շարունակեմ դառնա-  
գին արցունքներ թափել: Ո՛վ փշի  
եւ վարդի Սրբուհի, վարձատրի՛ր  
քո նկատմամբ ունեցած իմ մեծ  
յոյսը, եւ ես ամէնուր կը տարածեմ  
վշտացած հոգիների հանդէպ քո  
մեծ ողորմութիւնը:

Ո՛վ Խաչեալի զարմանալի հարս,  
օգնի՛ր ինձ լաւ ապրել եւ լաւ  
մեռնել: Ամէն:



## ՍՐԲՈՒՀԻ ՌԻԹԱՅԻ



## Սրբավայրը



## Անփուտ դիմ